ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք,
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
E-mail gavarmeria@rambler.ru
www.gavariqaghaqapetaran.am
հեռ. (0264) 2-34-23

ՈՐՈՇՈՒՄ
01 հուլիսի 2013թ. թիվ 34-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 34 հոդվածի 1-ին մասի 1/կետի 16-րդ հոդվածի 3-րդ կետի 62-րդ հոդվածով, ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին" ՀՀ օրենքի 33 հոդվածի 4-րդ կետի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2013թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին ֆինանսավորվող 09 բաժնի 1 խմբի 1 դասի /նախադպրոցական կրթության գործառնական դասակարգման 5113 /շենք և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածով նախատեսված 9630000 /ինը միլիոն վեց հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ ռումարից պակասեցնել 2800000 հազար ՀՀ դրամ, որից ավելացնել՝

1. 06 բաժնի 3 խմբի 1 դասի /ջրամատակարարում/ գործառնական դասակարգման 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածին՝ 2450000/ երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ ջուր մղելու շարժիչ ձեռք բերելու համար:
2. 04 բաժնի 5 խմբի 1 դասի /ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին՝ 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ Ազատության փողոցի վրա գտնվող ստորգետնյա անցումի վերանորոգման նախագծահետազոտական ծախսերի համար:

Կողմ (11)

ԱՐԾՐՈՒՆ ԴԿՈՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀԱՄԱՍՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍԱՐՈՒԽՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՂԱՐԻՐՅԱՆ

ԳԱՐԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ

ՄՇԵՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ՍԱՊԻՆ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍԱՐԳԵԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք,
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
E-mail gavarmeria@rambler.ru
www.gavariqaghaqapetaran.am
հեռ. (0264) 2-34-23

ՈՐՈՇՈՒՄ
01 հուլիսի 2013թ. թիվ 35-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Գավառ համայնքի 2013թ. պահուստային ֆոնդից.

1.4267 /կենցաղային և հանրային սենդի նյութեր/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ 2013թ.-ի հուլիս ամսին անցկացվող հրամանատարաշտաբային զորավարժություններին մասնակցող 160 զինապարտներին սենդի ծախսերը հոգալու՝ սնունդ և ըմպելիք ձեռք բերելու համար:

2. „Ազատագրում" հայրենասիրական կազմակերպության նախաձեռնող խումբը Հայաստանի սահմանամերձ գոտիների և Արցախյան ազատագրական պայքարի փաստագրական պատմությունը լուսաբանելու համար դիմել է Գավառի քաղաքապետարան աջակցության խնդրանքով, ուստի „Ազատագրում" գրքի հրատարակչական և տպագրական ծախսերի իրականացման համար 4639 /այլ ընթացիկ դրամաշնորհ/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ, հաշվի առնելով Արցախյան ազատագրական պայքարի լուսաբանման անհրաժեշտությունը:

3. 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածով Գավառի փողոցների հետիոտների անցումների և նշագծումների համար տրամադրել 1900000 /մեկ միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ:

ՊԱՅ (11) ԴԵՄ (0) ՉԵՌՆԱՊԱՀ (0)

ԱՐՄԱՆ ԴԱՎՈՅԱՆ

ԱՐՄԱՆ ՀԱՍԱՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՀՈՎԵՅԱՆ

ԱՐԱՄ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐԵՎԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ԱՐԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍԻՆԱՆՅԱՆ

ԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԻՐԽԱՆՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք,
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
E-mail gavarmeria@rambler.ru
www.gavariqaghaqapetaran.am
հեռ. (0264) 2-34-23

ՈՐՈՇՈՒՄ

01 հուլիսի 2013թ. թիվ 36-Ա

„ԳԱՎԱՌ" ՏԵՂԱՆՈՒՆԸ „ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ" ՏԵՂԱՆՎԱՆՄԱՄԲ ՓՈԽԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 30-րդ կետի, „Աշխարհագրական անվանումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով հետևյալը.

1828-1829թթ. պատմական Հայաստանի Բայազետ քաղաքից և շրջակա բնակավայրերից Արծրունի Եղբայրների առաջնորդությամբ բնակչությունը գաղթում է ներկայիս Գավառի տարածք, փրկվում հետագա եղեռնից:

Նոր բնակավայրը անվանվեց Նոր Բայազետ, որ կենդանի մնա հին, կորցրած բնակավայրի անունը, ինչը պատմական անուն է, կապված է մեծ հիշատակների, այդ թվում Բագրատունյաց գերեզմանատեղիի հետ: Բայազետ անունը նշանակել է գահաժառանգի /պայազատի/ նստավայր և կապ չունի սուլթան Բայազիդի հետ: Բերդը Պայազատի էր անվանվում Սուլթան Բայազետի հանդես գալուց շատ առաջ: ՀՀՇ-ական իշխանությունը իրավացիորեն փոխեց Կամո անունը , սակայն չվերականգնեց պատմական Նոր Բայազետ անվանումը, որով կոչվել էր շրջանը և քաղաքը մինչև 1959թ. Կամո վերանվանումը:

Պատմական անհրաժեշտություն է մարզկենտրոնի անունը փոխելու և վերականգնելու Նոր Բայազետ անունը:

Դրանով կհավերժանա մեր պապերի հայրենի ոստանի անունը, սերունդներին կհասնի պատմական ճշմարտությունը՝ թե որտեղից է եկել Գեղամա աշխարհի բնակչության մի մասը 19-րդ դարի 30-ական թվականներին:

Մայաց ոստան Բայազետի անունը պետք է մնա, ապրի և շարունակվի, ինչպես Արևմտյան Հայաստանի շատ տեղանուններ /Նոր Արեշ, Նոր Խարբերդ, Հաճն, Արաբկիր, Սեբաստիա և այլն/:

Հարցի քննարկվել է քաղաքի տարբեր կազմակերպություններում և թաղամասերում, կազմակերպվել է հանրային լսում Գավառի քաղաքապետարանի դահլիճում և ուղիղ եթեր „Գեղամա" հեռուստաընկերությունում:

Հաշվի առնելով ազգաբնակչության պահանջը և վերջին ժամանակների հանրային քննարկումների արդյունքները, Գավառ տեղանվան նկատմամբ խիստ դժգոհությունը, Բայազետի պատմական բնակավայրի անունը հավերժանալու համար, Գավառ համայնքի ավագանին

Որոշում է

1. Գավառ քաղաքը վերանվանել Նոր բայազետ
2. Դիմել ՀՀ Կառավարության աշխարհագրական օբյեկտների անվանափոխումների հարցերով պետական լիազոր մարմնին՝ Գավառ քաղաքը Նոր Բայազետ վերանվանելու
3. Դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ համաձայնություն տալու „Գավառ" տեղանունը „Նոր Բայազետ" տեղանվամբ վերանվանելու:

ոգամ (11) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐՄՈՒՆ ԴԱՎՈՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀԱՍԱՍՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԵՅԱՆ

ՎԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐԵԳՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ

ԱՐՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ

ՀՐԱՅՐ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ԱՆԻՆ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍԵՅԼԱՆ ԳԱՊՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք,
ք. Գավառ, Գր. Լուսավորչի 12
E-mail gavarmeria@rambler.ru
www.gavariqaghaqapetaran.am
հեռ. (0264) 2-34-23

ՈՐՈՇՈՒՄ
01 հուլիսի 2013թ. թիվ 38-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱՊԵՍ ԵՎ ԲԱՐՈՅԱՊԵՍ ՄԱՇՎԱԾ, ՀԵՏԱԳԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքագրման հանձնաժողովների կողմից Գավառ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացված՝ ֆիզիկապես և բարոյապես մաշված, հետագա օգտագործման համար ոչ պիտանի գույքացուցակները, Գավառ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համաձայնություն տալ խոտանելու /դուրս գրելու/ „Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն", „Գավառի ուսուցողական կենտրոն", „Գավառի արվեստի դպրոց", „Գավառի մշակույթի տուն", „Գավառի Հ. Թալալյանի անվան երաժշտական դպրոց", „Գավառի թիվ 3 մանկապարտեզ", „Գավառի թիվ 4 մանկապարտեզ", „Գավառի թիվ 8 մանկապարտեզ" համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքագրման հանձնաժողովների կողմից Գավառ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացված՝ ֆիզիկապես և բարոյապես մաշված գույքերի գույքացուցակներում ընդգրկված հետագա օգտագործման համար ոչ պիտանի և խոտանման ենթակա գույքը /հավելված 2/:

ամ (11) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՌՈՒԲԻՆ ԴԱՎՈՅԱՆ

ՌՈՒԲԻՐ ՀԱՍԱՍՅԱՆ

ՌՈՒԲԻՐ ՀՈՎԵՍՅԱՆ

ՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՍԵՅԻՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ՊՐՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ

Ր ՄԱՐԻՆՈՍՅԱՆ

ԱՆ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՍՏԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ